ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՐՆՍՏ ԹԵԼՄԱՆԻՆ

ՊԵՏՀՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ

31 JAN 2018

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՐՆՍՏ ԹԵԼՄԱՆԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1939

СВОБОДУ ЭРНСТУ ТЕЛЬМАНУ!

Гиз. Арм. ССР, Ереван, 1939

II-287109p



... Հարկավոր է ուժեղացնել և ամրապնդել ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի ինտերնացիոնալ պրոլետարական կապերը բուրժուական յերկրների բանվոր դասակարգի հետ. հարկավոր է կազմակերպել բուրժուական յերկրների բանվոր դասակարգի քաղաքական ոգնությունը մեր յերկրի բանվոր դասակարգին՝ մեր յերկրի վրա ռազմական հարձակում լինելու դեպքում, ինչպես նաև կազմակերպել մեր յերկրի բանվոր դասակարգի ամեն տեսակի ոգնությունը բուրժուական յերկրների բանվոր դասակարգին...

Ի. ՍՏԱԼԻՆ

ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի ինտերնացիոնալ կապերը կապիտալիստական յերկրների բանվորների հետ, ԽՍՀՄ-ի բանվորների յեղբայրական միությունը բոլոր յերկրների բանվորների հետ,— ահա խորհուրդների Հանրապետության ուժի և հզորության անկյունաքարերից մեկը:

Ի. ՍՏԱԼԻՆ

Ընկ. Թելմանի հեղափոխական զարգացումը և մարտական կյանքը ցույց է տալիս մեզ, որ իսկական հեղափոխականը, իսկական պրոլետարական առաջնորդը անում է մարքսիզմի-լենինիզմի խոր յուրացման հիման վրա և միաժամանակ անում է ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԿՐԱԿՈՒՄ: Բավական չէ ունենալ միայն հեղափոխական տեմպերամենտ — հարկավոր է նաև տիրապետել հեղափոխական թեորիայի գենիին: Սակայն բավական չէ ունենալ նաև զուտ տեսական գիտելիքներ — հարկավոր է դասակարգային թշնամու դեմ մղվող անընդհատ պայքարում, հաղթահարելով տևական դժվարություններն ու վտանգները, կարողանալ իր մեջ դաստիարակել հեղափոխական նվիրվածություն և տոկունություն, բոլշևիկյան կամք, հաստատակամություն և համառություն: Բավական չէ իմանալ, թե ի՛նչ է անհրաժեշտ անել կոմունիզմի հաղթանակի համար. հարկավոր է նաև արիություն ունենալ անելու այն, ինչ անհրաժեշտ է, հարկավոր է միշտ պատրաստ լինել ամեն մի զոհաբերության գնով անել այն, ինչ ծառայում է բանվոր դասակարգի շահերին: Հարկավոր է կարողանալ իր վողջ կյանքը ամբողջովին յենթարկել պրոլետարիատի շահերին:

Իսկական պրոլետարական հեղափոխականը հեղափոխական թեորիայի կենդանի մարմնացումն է, հեղափոխական թեորիա, որն անխզելիորեն կապված է պայքարող պրոլետարիատի հեղափոխական պրակտիկայի հետ:

Պրոլետարական հեղափոխականի հենց այդպիսի որինակ է հանդիսանում գերմանական բանվորների առաջնորդ Երնստ Թելմանը: Նա գերմանական բանվոր դասակարգի և վողջ միջազգային պրոլետարիատի միս ու արյունից է: Հենց այդ է պատճառը, որ ֆաշիստական դահիճները փորձում են վոչնչացնել նրան:

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

ԹԵԼՄԱՆԻ ԳՈՐԾԸ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ Է

(Կոմինտերնի Գործկոմի վողջույնից՝ Թելմանի 50-ամյակի որվա առթիվ)

Թանկագին ընկ. Երնստ Թելման

Կոմունիստական Ինտերնացիոնալի Գործադիր Կոմիտեն քեզ, գերմանական պրոլետարիատի աղատագրական պայքարի՝ բանտ նետված ղեկավարիդ բոցավառ մարտական վողջույն է հղում՝ քո 50-ամյակի որվա առթիվ: Այդ որը մենք նորից ընդգծում ենք Կոմունիստական Ինտերնացիոնալի սերտ միասնությունը քեզ հետ, հերոսաբար պայքարող Գերմանական կոմկուսակցության և Գերմանիայի հակաֆաշիստական բոլոր մարտիկների հետ—մի միասնություն, որին չի կարող արգելք հանդիսանալ վո՛չ մի բանտային պարիսպ:

Հանձին քո միջազգային պրոլետարիատը վողջունում է գերմանական ժողովրդի իսկական և լավագույն ներկայացուցչին, այն ժողովրդի, որն իր աշխատանքով ու յեռանդով ստեղծել է նյութական հսկայական արժեքներ և Գերմանիայի բարձր կուլտուրան, սակայն այժմ շղթայված ու ստրկացված է ամենաչարանենդ շահագործողների կողմից:

Քո ամբողջ կյանքը, ամենավաղ յերիտասարդությունից սկսած՝ նվիրվել է Գերմանիայի բանվոր դասակարգը կապիտալի լծից աղատագրելու համար մղվող պայքարին: Քո ուղին — նավահանգստի շարքային բանվորից դեպի գերմանական պրոլետարիատի՝ միլիոնների կողմից ճանաչված և հարգված առաջնորդը — քաջարիության մի

այնպիսի ուղի յե, վորով կարող են պարծենալ Գերմանիայի բանվոր դասակարգը և միջազգային պրոլետարիատը...

... Դու, վոր այնքան ջերմորեն սիրում ես մեծ սոցիալիստական Խորհրդային յերկիրը վորպես միջազգային պրոլետարիատի ազատագրական պայքարի հզոր միջնաբերդ և ընդհանուր խաղաղության հենարան, դու ունես բոլոր հիմքերը — և ե՛լ ավելի շատ հիմքեր կունենաս — ուրախանալու խորհրդային պրոլետարիատի այն վիթխարի հաղթանակներով, վոր նա տարել է և դեռ կտանի մեծ Ստալինի ղեկավարությամբ...

... Գիտցի՛ր, վոր բանվոր դասակարդի գործողությունների միասնության իրականացումն ազդային և միջազգային մասշտաբով, հակաֆաշիստական ամենալայն ճակատի ստեղծումը հաստատուն քայլերով դեպի առաջ է ընթանում: Դրա մասին առանձնապես վկայում է հակաֆաշիստական ժողովրդական ճակատի աճումը Ֆրանսիայում և Իսպանիայում:

Այդ մասին է խոսում ամբողջ աշխարհում հանուն միասնական ճակատի ստեղծված շարժման անընդհատ աճումը հակառակ բոլոր արդելքներին: Աճում է միլիոնանոց քաջարի բանակը, վորը պայքարում է հանուն խաղաղության, ազատության և սոցիալիզմի: Ֆաշիզմը կկախվի: Ֆաշիստները ժամանակավոր կառավարիչներ են: Այն մեծ գործը, վորին դու նվիրաբերել ես քո կյանքը, կհաղթանակի:

«Կոմունիստիչեսկի Ինտերնացիոնալ» № 8, 1936 թ. էջ 61—62.

Գ. ԴԻՄԻՏՐՈՎ

ՓՐԿԵՆՔ ԵՐՆՍՏ ԹԵԼՄԱՆԻՆ

Թելմանի ձերբակալությունից կարճ ժամանակ հետո, 1933 թվականի մարտի 3-ին, նացիոնալ-սոցիալիստական կառավարական շրջանները աղդարարեցին «Թելմանի և Ընկ.» առաջիկա վիթխարի դատավարության մասին: Այնուհետև փորձ արվեց Թելմանի դեմ մեղադրանք հարուցել ռայխստագի հրկիզման կապակցությամբ: Այս նպատակով այդ գործի նախնական քննության նյութերի մեջ հատուկ «վկաների ցուցմունքներ» մտցվեցին: Սակայն կառավարությունը չհամարձակվեց այդ քայլն անելու: Այդ ժամանակից ի վեր ֆաշիստները բազմաթիվ անգամ Թելմանի դեմ մեղադրանքների նոր վարիանտներ են տարածել, բայց այդ մեղադրանքների պաշտոնական ձևակերպման հրապարակումը շարունակ հետաձգվել է...

... Ռայխստագի հրկիզման վերաբերյալ դատավարությունը ֆաշիստների համար սպանիչ մերկացումներ բերեց իր հետ: Լայպցիգում նացիոնալ-սոցիալիզմը խոշոր պարտություն կրեց: Այդ Հիտլերներին, Գյորինգներին և Գեբբելսներին պարզ ցույց տվեց, վոր Թելմանի հետ դատական մենամարտը, վոր անխուսափելիորեն կվերածվի քաղաքական մենամարտի — շատ վտանգավոր գործ է: Դրանով ել հենց բացատրվում են կառավարական շրջանների չփոթությունը, նրանց տատանումները և Թելմանի դատավարության շարունակ նորանոր հետաձգումները...

... Սակայն գերմանական բանվորների առաջնորդի դատավարությունը և «իրավական» դատապարտումը նրան սպառնացող միակ վտանգը չի հանդիսանում: Նացիոնալ-սոցիալիստական իշխանավորների մեջ մտադրություն և հղանում այլ յեղանակով հաշիվ մաքրել վտանգավոր հակառակորդի հետ: Դատելով այն բանից, ինչ յես անձամբ տեսել եմ Բեռլինի, Լայպցիգի և Մյունխենի բանտերում, դատելով այն բանից, թե ինչ ցուցմունքներ էին տալիս համակենտրոնացման ճամբարներից և բանտերից Լայպցի-

գի դատարանը բերված վկաները, նացիոնալ-սոցիալիստական կառավարությունը քաղբանտարկյալներին բարոյապես և ֆիզիկապես վոչնչացնելու հաղարավոր հնարավորություններ ունի...

ԹԵ՞ԼՄԱՆԸ, ԹԵ՞ ՀԻՏԼԵՐԸ

Նացիոնալ-սոցիալիստական մամուլը կեղծավորաբար հարց եր տալիս. իսկապես, ինչո՞ւ արտասահմանի հասարակական կարծիքն այդպիսի աղմուկ և բարձրացնում Թելմանի առթիվ:

Այդ բանը դժվար չե բացատրել: Միշտ ավելի և ավելի լայն շրջաններ համակվում են այն համոզմամբ, վոր այս գործում խնդիրը միայն բանվորական առաջնորդի բախտին չի վերաբերում. խնդիրը վերաբերում ե յերկու աշխարհների պայքարին:

Յերկու աշխարհ կանգնած են իրար դեմ. ազատության համար մղվող պայքարի աշխարհ և մասսաների ճնշման աշխարհ.

Իսկական դեմոկրատիայի աշխարհ և բարբարոսության աշխարհ.

Կոմունիզմի աշխարհ և փաշիզմի աշխարհ:

Մի կողմից Երնստ Թելմանը — միլիոնավոր աշխատավորների, գյուղացիների, մանր աշխատավորների և աշխատավոր ինտելիգենցիայի՝ ազատագրության համար հերոսաբար մարտնչողը:

Մյուս կողմից Ադոլֆ Հիտլերը — գերմանական աշխատավոր ժողովրդին խարողը և տանջողը:

Այստեղ Երնստ Թելմանը՝ ժողովուրդների խաղաղության համար անխոնջ պայքարողը:

Այնտեղ Ադոլֆ Հիտլերը — պատերազմի մարմնացումը, պատերազմ, վոր նացիոնալ-սոցիալիզմի քաղաքականության ալֆան և ոմեգան ե հանդիսանում...

Միլիոնավոր մարդիկ ամբողջ աշխարհում կանգնած են հետևյալ վճռի առջև.

Թելմանի՞ կողմը, թե՞ Հիտլերի կողմը:

Ազատագրական պայքարի առաջնորդի՞ կողմը, թե՞ փաշիստական դահիճների գլխավորի կողմը:

Կուլտուրական վերելքի ներկայացուցչի՞ կողմը, թե՞ բարբարոսության կրողի կողմը:

ՎՈ՞ՐՆ Ե ԹԵԼՄԱՆԻ ՀԱՆՑԱՆՔԸ

Նացիոնալ-սոցիալիստական առաջնորդների աչքում Երնստ Թելմանը «պետական հանցագործ» ե:

Նրանց համար նա «պետական հանցագործ» ե այն պատճառով, վոր նա իսկապես պայքարում եր եքսպրոպրիատորներին եքսպրոպրիացիայի յենթարկելու միջոցով կապիտալիստական տիրապետությունը վոչնչացնելու համար, փոխանակ Կրուպպների, Տիսսենների և գերմանական աշխատավորների մյուս շահագործողների կողմը կանգնելու...

... Երնստ Թելմանը գերմանական աշխատավոր ժողովրդի հավատարիմ զավակն ե և նրա առաջավոր մարտիկը՝ ընդդեմ փաշիզմի, նա գերմանական բանվոր դասակարգի և միջազգային պրոլետարիատի միս ու արյունից ե, նրա շնչից ե...

... Երնստ Թելմանը, Մարքսի և Ենգելսի ժամանակներից սկսած, իրավամբ համաշխարհային պրոլետարիատի առաջավոր ջոկատներից մեկը համարվող գերմանական հեղափոխական բանվոր դասակարգի առաջնորդը, մարդկության փրկության և կուլտուրայի բարգավաճման համար մղվող այդ պայքարի սիմվոլն ե հանդիսանում:

Ի՞ՆՉՊԵՍ ԱԶԱՏԵԼ ԹԵԼՄԱՆԻՆ

Մենք արդեն քաղաքական խոշոր կռիվ ունեցանք Գերմանիայում փաշիզմի դեմ: Մենք արդեն բարոյական հաղթանակ տարանք խավարի և ռեակցիայի ուժերի դեմ: Դա Լայպցիգի դատավարությունն եր:

Ամբողջ աշխարհը տեսավ, թե ի՛նչպես կարելի յե ի չիք դարձնել փաշիզմի պլանները, յեթե վճռական և ճիշտ հարձակում կազմակերպվի հակառակորդի վրա...

Թելմանի ազատության համար մղվող պայքարում ինչպես հենց Գերմանիայում, այնպես էլ մյուս յերկրներում անհրաժեշտ է Լայպցիգի դատավարության ժամանակում յեղածից է՛լ ավելի մեծ չափով ստեղծել մի այնպիսի դրություն, վոր Հիտլերի կառավարությունը հենց իր սեփական քաղաքական շահերի համար ստիպված լինի հրաժարվել Թելմանին վոչնչացնելու պլանից:

«Երնստ Թելմանին պետք է շահել, ինչպես ճակատամարտ»,— ամենայն իրավամբ ասել է մեր մեծ բարեկամ Հանրի Բարբյուսը...

... Բոլորս դեպի պայքար հանուն Թելմանի ազատագրության:

Թելմանի փրկությունը միջազգային պրոլետարիատի պատվի գործն է, յուրաքանչյուր ազնիվ մտածող մարդու պարտքը՝ ամբողջ աշխարհում:

1934 թ. Մայիսի 19-ի հոդվածից, ՄՈՊՐ-ի կենտկոմի հրատ.

Վ. ՖԼՈՐԻՆ

ԵՐՆՍՏ ԹԵԼՄԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԸ

(Կենսագրական տեղեկություններ)

Երնստ Թելմանը ծնվել է Համբուրգում, 1886 թվականի ապրիլի 16-ին, պրոլետարական ընտանիքում: Դեռ կա մանուկ հասակում նա տեսնում էր, թե ինչպե՛ս են ճնշում իր ծնողներին, ինչպե՛ս են հալածում աշխատավորներին: Ամենավաղ տարիքից սկսած՝ յերիտասարդ Երնստն ամենորյա անխոնջ հեղափոխական պայքարի վկա և մասնակից է յեղել: Թելմանը դեռ մանուկ հասակում է ճանաչել քաղցը, զրկանքն ու ծանր աշխատանքը: Վերջացնելով դպրոցը՝ նա ստիպված էր ինքը հայթայթել իր ապրուստը, դառնալով նավահանգստի բանվոր:

16 տարեկան հասակում Երնստը դարձավ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ, իսկ 17 տարեկան հասակում՝ պրոֆմիությունի անդամ: Մտնելով պրոլետարական մարտիկների շարքերը՝ Երնստը մեծ ակտիվություն և նախաձեռնություն էր հանդես բերում: Նա ստեղծեց յերիտասարդության պրոֆմիութենական կազմակերպություններ և շուտով դարձավ Համբուրգի պրոֆմիութենական յերիտասարդության ճանաչված լիդերը: Շուտով նույնիսկ ավագ բանվորներն սկսեցին այնպիսի մեծ վստահություն տածել դեպի պատանի մարտիկը, վոր հաճախ նրան պատգամավոր եյին ընտրում պրոֆմիութենական համագումարներին: Պատանի Երնստը ցերեկն աշխատում էր, իսկ յերեկոյան ժամերը դնում էր կուսակցության և պրոֆմիության տրամադրության տակ: Նա դիշերներն ուսումնասիրում էր մարքսիստական դրականությունը, համառորեն տիրապետում էր հեղափոխական թեորիային:

1914 թվականի իմպերիալիստական առաջին պատերազմի հենց սկզբից Երնստ Թելմանը պայքարում էր սոցիալ-դեմոկրատական առաջնորդների դավաճանության դեմ: Այդ իսկ պատճառով նրան վորպես «կասկածելի» անձնավորություն շուտով կանչեցին զինվորական ծառայության և ուղարկեցին ռազմաճակատ, վորտեղ, վոստիկանության հաշվով, նա պետք է սպանվեր:

Չնայած հետապնդմանը՝ Թելմանը կարողացավ կապ պահպանել յերկրի ներսում գտնվող հեղափոխականների հետ: Վերահաս հեղափոխական անցքերի ժամանակ նա գտնվում էր Համբուրգում, վորտեղ նա ընդհատակյա կազմակերպիչ էր, սոցիալ-շովինիստների վոխերիմ հակառակորդը և խաղաղության ջերմեռանդ մարտիկը: Երնստ Թելմանը մտավ «Անկախ սոցիալ-դեմոկրատիայի» մասսայական կուսակցության (ԴՍՍԿ) մեջ և գտնվում էր նրա ձախ թևում: 1918—1919 թվականների հեղափոխական կռիվների ժամանակ Թելմանը Համբուրգի հեղափոխական շարժման գլուխ էր կանգնած:

1919 թվականին Թելմանին ընտրեցին Գերմանիայի Անկախ սոցիալ-դեմոկրատիայի կուսակցության համբուրգյան կազմակերպության նախագահ: Նա վճռական պայքար եր մղում ընդդեմ «Անկախ սոցիալ-դեմոկրատիայի» ցենտրիստական առաջնորդների — Կաուցկու, Հիլֆերդինգի և ուրիշների, պայքարում եր «Անկախ սոցիալ-դեմոկրատիայի» կուսակցությունը Գերմանիայի կոմունիստական կուսակցության հետ ձուլելու համար: Թելմանի գործունեության շնորհիվ «Անկախ սոցիալ-դեմոկրատիայի» Համբուրգի կազմակերպությունը ԳԱՍԿ-ի ներսում դարձավ մեծամասնության համար մղվող պայքարի առաջատար խումբը, միացում, վոր տեղի ունեցավ 1920 թվականին, և Թելմանը կոմկուսակցության շարքերն մտցավ անկախական անդամների 90 տոկոսի հետ միասին: 1922 թ. Թելմանն ընտրվեց Գերմանիայի կոմկուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ: 1923 թվականի հոկտեմբերին Համբուրգի պրոլետարիատի առաջավոր ջոկատն ապստամբեց: Կուսակցական աջ ղեկավարության դավաճանության հետևանքով համբուրգյան ապստամբությունը մեկուսացվեց և ճնշվեց բուրժուազիայի կողմից: Սակայն այդ ապստամբությունն ե՛լ ավելի բարձրացրեց կոմունիստական կուսակցության հեղինակությունը և ուժեղացրեց նրա ղեկավար դերը գերմանական բանվոր դասակարգի պայքարում: Գերմանիայի վողջ բանվոր դասակարգի համար Երնստ Թելմանը դարձավ խիզախ և կայուն հեղափոխականի սիմվոլ: Թելմանը դարձավ Գերմանիայի հեղափոխական բանվորական շարժման կենտրոնական դեմքը:

1924 թ. սկզբներում Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը իրեն նախագահ ընտրեց Թելմանին, Գերմանիայի բանվոր դասակարգի այդ լավագույն դավակին, պողպատյա բոլշևիկին, Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտին: Երնստ Թելմանի ղեկավարությամբ Գերմանիայի կոմկուսակցությունը վճռական պայքար մղեց ամեն դույնի ոպորտունիստների դեմ՝ մերկացնելով և կուսակցության շարքերից դուրս քշելով տրոցկիստական և աջ դավաճաններին: Թելմանի ղեկավարությամբ Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը նվաճեց արդյունաբերական կարևորագույն բնաղավառների բանվոր դասակարգի մեծամասնությունը:

Երնստ Թելմանն անշեղորեն վարում եր գերմանական բանվոր դասակարգը միավորելու քաղաքականություն՝ ռեակցիայի և ֆաշիզմի դեմ պայքարելու համար: Նա յեղել է գերմանական բանվոր դասակարգի առաջին առաջնորդը, վոր պայքարել է բանվորական և գյուղացիական կազմակերպությունների միջև միասնություն ստեղծելու համար, և կուսակցության անունից սոցիալ-դեմոկրատ բանվորներին նա կոչ է արել միահամուռ պայքար մղել սպառնացող ֆաշիստական վտանգի դեմ:

Թելմանը համառորեն պայքարում եր ընդդեմ գերմանական իմպերիալիզմի սպառազինման և ընդդեմ նոր իմպերիալիստական պատերազմի հրահրման: Փարիզում նա հանդես յեկավ ֆրանսիական բանվորների առաջ, հայտարարելով գերմանական և ֆրանսիական բանվոր դասակարգի յեղբայրություն՝ նրանց ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում: Նրա նախաձեռնությամբ գերմանական սահմանագծերի վրա կազմակերպվել են միջազգային հանդիպումներ, վորտեղ զանազան յերկրների բանվորները յերդվում եյին փոխադարձ բարեկամություն պահպանել: Թելմանը գերմանական բանվորներին շարունակ կոչ եր անում՝ համերաշխություն ստեղծել Խորհրդային Միության ժողովուրդների հետ և ընդգծում եր աշխարհիս առաջին սոցիալիստական պետությունը պաշտպանելու անհրաժեշտությունը:

Միշտ և բոլոր պոստերում Թելմանն աշխատել է բացառապես հոգուտ աշխատավոր մասսաների և միշտ վայելել է այդ մասսաների վստահությունը: Նրան ընտրում եյին պրոֆմիութենական համագումարներին, վորտեղ նա պաշտպանում եր պրոֆմիութենական դեմոկրատիան՝ պայքար մղելով պրոֆմիութենական ռեակցիոն բյուրո-

կրատիայի դեմ։ Համբուրգի բանվորները 1919 թվին նրան ընտրեցին քաղաքային պառլամենտի անդամ։ 1924 թվականից նա անընդհատ յեղել է ռայխստագի անդամ. պառլամենտական ամբիոնը նա ոգտագործում եր ֆաշիզմի դեմ պայքարելու նպատակով գերմանական բանվոր դասակարգին մոբիլիզացիայի յենթարկելու համար։ Գերմանական բանվոր դասակարգը յերկու անդամ առաջադրեց Երնստ Թելմանի թեկնածությունը վորպես պրեզիդենտ։ 1932 թվականին, յերկրորդ ընտրությունների ժամանակ, Թելմանի ոգտին քվեարկեց հինգ միլիոն ընտրող։

Վորպես Գերմանիայի կոմունիստական կուսակցության ղեկավար՝ 1924 թվականից նա հանրածանոթ առաջնորդի հեղինակությունն եր վայելում։ Գերմանական կոմկուսակցությունից դուրս ևս, յեղբայրական կոմունիստական կուսակցություններում, աճում եր սերը Թելմանի նկատմամբ։ Կոմինտերնի V Համաշխարհային կոնգրեսում Թելմանն ընտրվեց Կոմինտերնի Գործադիր կոմիտեյի անդամության թեկնածու, իսկ VI Համաշխարհային կոնգրեսում նրան ընտրեցին Կոմինտերնի Գործկոմի անդամ։

Գերմանիայում ֆաշիստական դիկտատուրայի հաստատումից հետո Թելմանը մնաց գերմանական բանվորների մեջ, կազմակերպելով պայքար ֆաշիզմի դեմ, ամրապնդելով բանվորական կազմակերպությունների գործողությունների միասնությունը մինչև այն ժամանակ, յերբ 1933 թ. մարտի 3-ին տրոցկիստները մատնեցին նրան և հանձնեցին գեստապոյին։

Երնստ Թելմանը, Գերմանիայի կոմունիստական կուսակցության առաջնորդը, որինակ է հանդիսանում այն բանի, թե հաղթանակների և պարտությունների ընդմիջվող պրոցեսում պրոլետարիատի առաջավոր ջոկատը ինչպե՛ս է դաստիարակում բանվոր դասակարգի առաջնորդին։ Գեստապոյի կաղեմատներում բանտարկված՝ բանվոր դասակարգի առաջնորդ Երնստ Թելմանը դարձել է գերմանական բանվոր դասակարգի հերոսական պայքարի և գերմանական ժողովրդի ազատագրական պայքարի սիմվոլը։

ԸՆԴԴԵՄ ՖԱՇԻԶՄԻ—ՀԱՆՈՒՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ

(Երնստ Թելմանի ճառերից)

Ռայխստագի ընտրություններից հետո 1930 թվականին Թելմանն ասել է.

«Մենք պարզում ենք կոմունիզմի դրոհի դրոշը և այն տանում ենք մասսաների առջևից։ Մենք գերմանական բանվորների գիտակցության մեջ, վորպես վոգևորիչ և դրավիչ որինակ, մտցնում ենք այն դասերը, վոր ամբողջ համաշխարհային պրոլետարիատին ավանդում է Խորհրդային Միության մեջ կատարվող սոցիալիստական շինարարության հերոսական գործը»։

★

Գերմանիայի կոմկուսակցության կենտկոմի՝ 1932 թ. փետրվարին կայացած պլենումի նիստին Թելմանը հայտարարել է.

«Մենք ասում ենք, վոր միասնական ճակատի հեղափոխական քաղաքականությունը Գերմանիայում տարվող պրոլետարական քաղաքականության շղթայի գլխավոր ողակն է։ Ընկերնե՛ր, այսպիսի ձևակերպումը հսկայական նշանակություն ունի։ Մենք դրա վրա կանգ ենք առել լավ մտածելուց հետո»։

Իսկ 1932 թ. հուլիսի 10-ին Բեռլինում կայացած՝ միասնության հակաֆաշիստական համագումարում Թելմանն ասել է.

«Ֆաշիզմի դեմ միասնական ճակատի հարցը — դա կյանքի հարց է գերմանական պրոլետարիատի համար»։

★

1932 թ. դեկտեմբերի 31-ին Թելմանը հանդես եկավ Փարիզում, Բուլլյե դահլիճում տեղի ունեցած մասսայական միտինգին։ Բուռն ծափահարությունների արժանացած նրա ճառը տոգորված էր ֆրանսիացիներին և գերմանացիներին պատերազմի վտանգի դեմ միացնելու վոգով։

«Իմ համառոտ ելույթը,— ասաց Թելմանը,— նվիրված է միջազգային մեծ խնդրին՝ այստեղ, Ժան Ժորեսի քաղաքում հաստատել անխորտակելի համերաշխություն և սերտ, եղբայրական, ընկերական կապ գերմանական և ֆրանսիական բանվորների միջև՝ նրանց ընդհանուր պայքարում։

Մենք, կոմունիստներս, ասում ենք ձեզ, ֆրանսիական բանվորնե՛ր և աշխատավոր մասսանե՛ր. ձեր տառապանքի ընկերը Գերմանիայում, այնտեղի բանվորն ու գյուղացին, ձեր թշնամին չէ, նա ձեր բնական դաշնակիցն է։ Ճիշտ նույն բանն ասում ենք նաև գերմանական աշխատավորներին, վոր ֆրանսիական բանվորն ու աշխատավորը նրանց թշնամին չէ, այլ նրանց ընկերն է։

Միայն միահամուռ ուժերով կարող ենք հաջողությամբ պայքար մղել նոր պատերազմ նախապատրաստելու դեմ և հեռացնել մասսաներից իմպերիալիստական պատերազմի չարիքը։

Մենք չենք ցանկանում վերականգնել Գերմանիայի իմպերիալիստական հզորությունը։ Ընդհակառակը։ Մենք ամենահամառ պայքար ենք մղում ընդդեմ իմպերիալիստական և միլիտարիստական ձգտումների...

... Մենք, գերմանական կոմունիստներս, առաջավոր պոստումն ենք գտնվում ֆաշիզմի դեմ պայքարելու գործում։ Ֆաշիստական դիկտատուրայի դեմ մղվող մեր պայքարը միաժամանակ նաև ձեր պայքարն է հանդիսանում»։

★

Վերադառնալով Բեռլին՝ Թելմանը 1932 թ. նոյեմբերի 1-ին Սպորտպալատում ունեցած իր ելույթի ժամանակ հսկայական ժողովի բուռն հավանությամբ տվեց հետևյալ հանդիսավոր խոստումը.

«Մենք ե՛լ ավելի համարձակորեն, ե՛լ ավելի անվեհեր կերպով, սահմանադրության սյուների վրայից յեղբայրական համերաշխությամբ ձեռք կմեկնենք Ֆրանսիայում գտնվող մեր ընկերներին, վորպեսզի մարտական դաշինք կնքենք պատերազմի վոճրագործների և նրանց գործակիցների դեմ»։

★

Յերբ 1932 թվականին ճապոնացիները ներխուժեցին Շանհայ, Թելմանն իր մի ելույթի ժամանակ բացականչեց.

«Ցեսս դիմում եմ գերմանական բոլոր աշխատավորներին և կոչ եմ անում ամբողջ ուժերը նվիրել՝ պայքարելու իմպերիալիստական սպանդի դեմ։ Գերմանական և միջազգային բանվոր դասակարգը հենց այսոր պետք է անի ամեն ինչ, վորպեսզի ամենավճռական կերպով պայքարի այս համաշխարհային վոճրագործության դեմ»։

★

1932 թ. հուլիսի 17-ին, Հինդենբուրգ քաղաքում, Վերին Սիլեզիայի յերեսուն հազար հակաֆաշիստների ներկայությամբ արտասանած իր ճառում Թելմանը ժողովականների խանդավառ բացականչությունների ներքո ասաց հետևյալը.

«Ձեր Վերին Սիլեզիան անվանում են «արնածոր սահմանամերձ յերկրամաս»։ Այո՛, Վերին Սիլեզիան արնածոր սահմանամերձ յերկրամաս է։ Վերին Սիլեզիան և առանձնապես նրա աշխատավոր բնակչությունը արյուն են ծորում գերմանական և լեհական ֆաշիզմի կարիճների հարվածների տակ։ Այստեղ, Գերմանիայի աղքատ հա-

11.28.4091

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՍՍՐ

յավ–արևելքում, այստեղ, նացիոնալիստական և շովինիստական հալածանքի թատերաբեմում,— մենք պարզում ենք հակաֆաշիստական յելույթի մեր միջազգային մարտական դրոշը: Մենք համերաշխություն ենք ստեղծում սահմանից այն կողմը գտնվող հակաֆաշիստների հետ:

Մենք ասում ենք. «Այլևս յերբեք չպետք է լինի յեղբայրասպանություն...»: Մենք ցանկանում ենք կապվել յեղբայրության հանդույցներով: Ցեթե գերմանական ֆաշիստները պատերազմով հափշտակված յերդում և բացականչում են՝ «Ուզում ենք աղշավել արևելքի վրա»,— այն ժամանակ մենք կերդենք՝ «Մենք կկարողանանք բոլոր միջոցներով կորել ձեր ճանապարհը»:

Երնստ Թելմանը համարյա իր յուրաքանչյուր յելույթում ընդգծում եր Խորհրդային Միության դերը միջազգային պրոլետարիատի ազատագրական պայքարում և մատնանշում եր ԽՍՀՄ–ն իմպերիալիստների հարձակումից պաշտպանելու նշանակությունը:

Դեռ 1929 թվականին Գերմանիայի կոմկուսակցության XII համագումարում տված իր զեկուցման մեջ Թելմանն ասում եր.

«Դեպի Խորհրդային Ռուսաստանը ինտերվենցիա կազմակերպելու համար իմպերիալիստական յերկրների կողմից տեսնվող պատրաստությունների աճման հանդեպ ամբողջ աշխարհի բանվորների պարտքն է՝ բոլոր միջոցներով պաշտպանել աշխարհիս առաջին պրոլետարական պետությունը: Գերմանիայի կոմունիստական կուսակցության անունից և հեղափոխական բանվորների անունից մենք այստեղից մեր յեղբայրական մարտական վողջույնն ենք հղում Կարմիր բանակին՝ ամբողջ աշխարհի պրոլետարիատի պաշտպանին:

Խորհրդային Միության պաշտպանությունը պետք է դառնա բոլոր յերկրների բանվորների հեղափոխական քաղաքականության կենտրոնական առանցքը»:

Ե. ՖԵԼԴՄԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԵԼՄԱՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Վեց տարի յե, ինչ ֆաշիստական զնդանում տանջվում է գերմանական պրոլետարիատի առաջնորդ Երնստ Թելմանը: Վեց տարի նա յենթարկվում է սոսկալի տանջանքների և չարչարանքների: Գերմանիայի կոմկուսակցությունը բազմիցս տեղեկություններ է ստացել այդ տանջանքների մասին: Մի անգամ բանտում Թելմանի վրա հարձակվեցին չորս դահիճ. նրանք պոկեցին նրա վրայից հագուստը, նրան ձգեցին գետին և, ինչպես կատաղած գազաններ, սկսեցին ծեծել ռետինե մահակներով և մտրակներով: Նրանք հարվածում եյին արնաշաղախ Թելմանի կրծքին՝ սրտի մոտերքը. ծեծից հետո նա յերկար ժամանակ հիվանդ եր:

Թելմանի հաստատակամությունը և նրա հավատարմությունը բանվոր դասակարգին՝ հարգանք առաջացրին նույնիսկ ֆաշիստական բանտապահների մեջ: Ֆաշիստական պարագլուխները չեյին վստահում իրենց սեփական չինովնիկներին: Նրանք ձերբակալեցին բանտային 20 ծառայողների, և նրանցից մեկին Գեստապոյի բանդիտներն սպանեցին այն պատճառով, որ նա ուզում եր մեղմացնել անմարդկային վերաբերմունքը Թելմանի նկատմամբ: Թելմանին հսկում են ֆաշիստական պահնորդականների հատուկ ջոկված դրաբմբեր:

Ֆաշիստները վախենում եյին Թելմանին Բեռլինում թողնել: Նրանք վախենում եյին, որ նրա՝ Բեռլինի բանտում մնալը նրա ազատության համար մղվող հակաֆաշիստների պայքարի մշտական շարժառիթը կլինի: Հանկարծ գիշերով ֆաշիստները Թելմանին փոխադրեցին Հանովեր: Այնտեղ նրան պահում են տաժանակիրների բանտում, խիստ մեկուսացված:

Այս բոլոր տարիներին ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաները համառ, մշտական պայքար են մղում Երնստ

Թելմանի ազատագրության համար։ Այս պայքարում բացառապես մեծ է ՄՈՊՐ-ի դերը։ Ամբողջ աշխարհում, բոլոր ժողովուրդների մեջ, վողջ առաջավոր մարդկության մեջ, վորը սիրում է խաղաղությունը և ատում ֆաշիզմը, ե՛լ ավելի բարձր, ե՛լ ավելի խիստ է հնչում «Ազատություն՛ Թելմանին» պահանջը։

Թելմանի պաշտպանության կոմիտեյի հրավիրած համայնբրոպական կոնֆերենցիայում ստեղծվեց «Գերմանիայում իրավունքի և ազատության համար պայքարելու միջազգային կոմիտե»։ Կոմիտեյի կազմի մեջ մտան յեվրոպական յերկրների հասարակական խոշոր կազմակերպությունները և հայտնի հասարակական գործիչներ, վորոնք պատրաստ են պայքար մղելու Երնստ Թելմանի ազատության և Հիտլերին հակառակորդ բոլոր բանտարկյալների ազատության համար։

Բոլոր աշխատավորների համար Թելմանը դարձավ հանուն խաղաղության մղվող պայքարի սիմվոլ — ֆաշիզմի դեմ մղվող պայքարի սիմվոլ։ Ֆրանսիական ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչներն այդ միտքն արտահայտել են հետևյալ խոսքերով.

«Թելմանի անունը, վորպես բողոք և հույս, հնչում է կուլտուրական աշխարհի մի ծայրից մյուսը։ Նա իրենից միայն իրավունք չի ներկայացնում։ Աղդերի համար նա հանդիսանում է գերմանական ժողովրդի, այս մեծ ժողովրդի սիմվոլը, մի ժողովուրդ, վորը թեև այժմ ճնշված է, բայց և այնպես մեզ համար մնում է Գյոթեյի, Շիլլերի, Կանտի, Վագների, Եյնշտեյնի ժողովուրդը» (Ե. Բայե)։

Նախկին ճակատային և լիբերալ դրող Պյեր Պարաֆը Թելմանի ծննդյան օրվա առթիվ գրել է.

«Քո անունը, թանկագին ընկեր Թելման, չարունակ ուղեկցում է մեր ժողովուրդներին ու ցույցերին, այնպես վոր դու մեզ թվում ես մեր հին բարեկամներից մեկը։ Բայց այդ անունը մեզ համար ե՛լ ավելի մեծ բան է նշանակում։ Քո անունը մեր մեջ ապրում է վորպես հիտլերյան բարբարոսության դեմ մղվող պայքարի կենդանի և հզոր սիմվոլ, վորպես ազատ հաղթանակների գրավական»։

Բուրժուական-դեմոկրատական յերկրների հասարակական կազմակերպությունները և ներկայացուցիչները, եմիգրանտների խոշոր կազմակերպությունների նախաձեռնությամբ հավաքվելով Եվիանում կայացած միջազգային կոնֆերենցիային, քննարկեցին այն հարցը, թե ի՛նչպես ոգնել Գերմանիայից դուրս քշված և վախած՝ ֆաշիստական տեռորի զոհերին։

«Միջազգային կոմիտեն», վորն ընտրված է այս կոնֆերենցիայում և գտնվում է Լոնդոնում, վորոշեց ձեռք բերել «ավելի քան հինգ տարուց առաջ բանտարկված մեծ Թելմանի» և մյուս բոլոր անմեղ ձերբակալվածների ազատությունը և ազատվել նրանց մեկնումն ուրիշ յերկրներ։

Երնստ Թելմանի ազատության համար մղվող պայքարը դարձավ ֆաշիզմի դեմ, պատերազմի վտանգի դեմ, հանուն խաղաղության մղվող պայքարի անխզելի մասը։

Ազատագրված աշխատանքի յերկրում — Խորհրդային Միությունում — «Ազատություն Երնստ Թելմանին» լոզունգն աշխատավորների ամենատարածված և մարտական լոզունգներից մեկն է։

ԽՍՀՄ-ում հարյուրավոր կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ և ձեռնարկություններ Թելմանի անունն են կրում։ Իրենց բազմաթիվ ժողովներում բանվորները, կոլտնտեսականները և խորհրդային ինտելիգենտները ամեն որ և ամեն ժամ բարձրացնում են իրենց հուժկու ձայնը հանուն Թելմանի ազատության։

Հարյուրավոր, հազարավոր նամակներ և բանաձևեր են գրվում ընկեր Թելմանի հասցեին, վորտեղ արտահայտվում են սիրո և Երնստ Թելմանի արիությամբ հիանալու ամենաանկեղծ զգացումները։

Վոլոդարսկու անվան կարի ֆաբրիկայի (Զապորոժյե քաղաքում) աշխատողները գրում են Թելմանին.

«Մենք, Վոլոդարսկու անվան ֆաբրիկայի աշխատող-

ներս, հղում ենք քեզ մեր ջերմ վողջույնը. ցանկանում ենք քեզ առողջություն և տոկունություն՝ համբերությամբ տանելու բանտարկությունը:

Մեր թանկագին Երնստ, մենք քո մասին հաճախ ենք կարդում «Ինտերնացիոնալի Մայակ» ժուռնալում, մեզ լավ հայտնի յեն այն բոլոր չարչարանքները և դազանային տանջանքները, վոր դու կրում ես ֆաշիստական բարբարոսների կողմից: Դու մարդկության ազատագրության անխոնջ մարտիկ ես, բայց շուտով կբացվեն բանտի դռները, և բանվորները քեզ ձեռքերի վրա դուրս կբերեն ֆաշիստական զնդաններից:

Յտեսություն, մեր թանկագին Թելման»:

Դնեպրոպետրովսկի մարզի Բելոզերսկի ռայոնի Լենինի անվան կոլտնտեսության կոլտնտեսականները Թելմանին գրում են.

«Ձեզ, գերմանական պրոլետարիատի առաջնորդիդ. պրոլետարական հեղափոխության դործի համար անխոնջ մարտնչողիդ, մենք, կոլտնտեսականներս և կոլտնտեսուհիներս, թվով 318 մարդ, հղում ենք մեր բոցավառ բոլշևիկյան վողջույնը:

Հիտլերյան ֆաշիստները — այդ դարշանքը խլեց ձեզ մեր շարքերից և բանտ նետեց, սակայն նրանց չի հաջողվի խլել ձեզնից պրոլետարական հեղափոխության հաղթանակի հավատը: Մենք, կոլտնտեսականներս և կոլտնտեսուհիներս, ամբողջ աշխարհի աշխատավորների հետ միասին, ձեզ զրում ենք մեզ մոտ, ամբողջ առաջավոր, առաջադեմ մարդկության հետ միասին: Մենք պահանջում ենք ձեր ազատությունը ֆաշիստական ճիրաններից:

Մեր սոցիալիստական յերկրում չի անցնում մի ժողով, մի կոնֆերենցիա, մի համագումար, վորտեղ ձեզ, Երնստ Թելման, չընտրեն պատվավոր նախագահության մեջ. չկա մի ցույց, վորտեղ չլինի ձեր նկարը և ձեր ազատությունը պահանջող լոզունգ»:

Առաջավոր մարդկության ձայնը թափանցում է գերմանական ֆաշիզմի մռայլ կաղեմատները և ե՛լ ավելի յե

ամրապնդում Թելմանի վոգին: Թելմանը գիտե, վոր ինքը մենակ չէ, վոր իր ազատության համար պայքարում է մարդկության լավագույն մասը:

Թելմանի անունը հնչում է աշխարհի բոլոր ծայրերում: Թելմանի անունով կռվի յեն դնում Իսպանիայի և Չինաստանի ռազմաճակատներում: Մեր խնդիրն է՝ դուրս կորզել Թելմանին դահիճների ձեռքերից: Նպատակը մեծ է, և այդ նպատակին կարելի յե հասնել միայն միջազգային վողջ պրոլետարիատի ջանքերով:

Ամբողջ առաջադեմ մարդկության բողոքի հզոր յելույթների և խորհրդային կառավարության վճռական ոգնության շնորհիվ ընկեր Դիմիտրովին ֆաշիստական մարդասպանների ճանկերից ազատելը ցույց տվեց միջազգային համերաշխության վիթխարի ուժը:

22 տարի շարունակ Սան-Կվենտինի բանտում տառապած Թոմ Մունիի վերջերս տեղի ունեցած ազատումը մի անգամ ևս ցույց տվեց, թե ի՛նչպիսի արդյունքների կարող է հասնել ֆաշիզմի և ռեակցիայի դեմ մղվող պայքարի միջազգային շարժումը:

Ամրապնդելով պատերազմի և ֆաշիզմի դեմ պայքարող ժողովրդական միասնական ճակատը, կապիտալիստական յերկրների աշխատավորները պայքարում են Երնստ Թելմանի և բոլոր բանտարկված հակաֆաշիստների ազատության համար և Գերմանիան ու ամբողջ աշխարհը պատերազմի ֆաշիստական հրձիգներից ազատելու համար:

ՀՀ Սգգային գրադարան
NL0987286

Խմբագիր՝ Արմ. Թամազյան
Թարգմ.՝ Վ. Ավագյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յե. Տեր-Մինասյան

Գլավլիտի լիազոր՝ Դ.—1847. Հրատ. № 4865
Գաուվեր 303. Տիրաժ 4000
Թուղթ 62×94. Տպագր. 1½ մամ.
Մեկ մամ. 33440 նշան.
Հանձնված է արտադրության 26 մարտի 1939 թ.
Ստորագրված է տպագրության համար 4 մայիսի 1939 թ.

Գետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

-20-

Р-38ա

ԳԻՆԸ 50 Կ.

16 ИЮН. 1939

11
28710

Свободу Эрнсту Тельману!

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.